

Հավասարության Ուղի

Նպատակ

Հաստատել հավասար իրավունքներ և հնարավորություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ նպաստելով նրանց լիարժեք մասնակցությանը հասարակական կյանքին:

Գործողություններ

Հաշմանդամություն ունեցող անձանց համար գործող «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» (EREO) ՀԿ-ի գրասենյակը (որտեղ գտնվում է նաև կարի և տպագրության սոցիալական ձեռնարկությունը) ապահովել.

- Ջեռուցման համակարգով
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված դռներով, սանհանգույցով և խոհանոցով:

Ծրագրի նկարագրություն

«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» (EREO) ՀԿ-ն հիմնադրվել է 2014 թվականին հաշմանդամություն ունեցող անձանց կողմից և նպատակ ունի օժանդակել Լոռու մարզում հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների լիակատար իրացմանը և նրանց լիարժեք մասնակցությանը հասարակական կյանքին:

ՀԿ-ն ակտիվորեն զբաղվում է հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության, նրանց կրթության, զբաղվածության իրավունքների և խնդիրների վերհանման և լուծման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների

պաշտպանության, նրանց առաջնորդական որակների զարգացման, վերջիններիս հանդեպ խտրականության վերացման հարցերով: Կազմակերպության ուղղակի շահառուների թիվը անցնում է 300-ը, իսկ անուղղակի շահառուների թիվը 500-ը:

2017 թվականին «Եվրոպական միության» (EU) ֆինանսավորմամբ և «Միջմշակութային Ուսումնասիրությունների, Ուսուցման և Երկխոսության Միջազգային Կենտրոն»-ի (ICIRLD) աջակցությամբ ՀԿ-ն հիմնադրել է կարի արտադրության սոցիալական ձեռնարկատիրություն: Արտադրամասում երկամյա դասընթացից հետո աշխատանքի են անցել սոցիալապես անապահով ընտանիքների անդամներ և հաշմանդամություն ունեցող անձիք: Նրանք հայկական ավանդական տիկնիկներ, դեկորատիվ բարձեր, անկողնային պարագաներ և մանկական գոգնոցներ են կարում և ասեղնագործում, ինչպես նաև մատուցում են տպագրական ծառայություններ:

Հիմնադրման պահից կազմակերպությունը ունեցել է գրասենյակային տարածքի խնդիր, սակայն 2018-ին այս խնդրի լուծման նպատակով կազմակերպված դրամահավաքի շնորհիվ կարողացել են ձեռք բերել մշտական տարածք: Սակայն այն հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց պահանջմունքներին՝ չկա ջեռուցման համակարգ, պատուհանները հին են և կոտրված, սանհանգույցը և խոհանոցը հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող մարդկանց կարիքներին:

Այո-ն որոշել է անմասն չմնալ ու աջակցել այս կարևոր նախաձեռնությանը: Այս պահին ջեռուցման համակարգը, հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված դռները, սանհանգույցը և խոհանոցը այն առաջնային անհրաժեշտություններն են, որոնք կնպաստեն կենտրոնի ակտիվ գործունեության ծավալմանը և՛ ձմռանը, և՛ ամռանը:

Դու էլ միացի՛ր այս կարևոր շարժմանը և Այո՛ ասա ավելի ներառական հասարակության ստեղծմանը:

Բյուջե

ԻՆՉ	ՄԻԱՎՈՐ	ՔԱՆԱԿ	Մ.ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՀ ԴՐԱՄ
Սանհանգույցի հարմարեցում				147200
Պատուհանների և դռների տեղադրում				732000
Ջեռուցման համակարգի տեղադրում				570000
Հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարավետ փոքրիկ խոհանոցի տեղադրում				
Լվացարան	հատ	1	40000	40000
Խոհանոցային դարակ	հատ	3	10000	30000
Փոքրիկ սառնարան	հատ	1	150000	150000

Փոխարժեքը 2019-ի հոկտեմբերի 17-ի դրությամբ՝
1 ԱՄՆ դոլար = 470

ԸՆԴՀԱՆՈՒՐ **դ1 669 200**